## 102. ԹՈՋԸ ԹՈՋ ԿԸԼԻ, ՈՒՋԸՄ Ա ԻՍԱՆԻ ԾԸԻԾ ԾԸԾԻ, ՈՒՋԸՄ Ա՝ ԱՍԼԱՆԸԻ

Ըլըմ ա լըմ չի. մի հարուստ տըղա ա ըլըմ։ Էս տըղեն ինչքան կընիկ ա առնըմ, չիմն էլ բող են ըլըմ, բոզութին են անըմ, նա̈ էլ տուս ա անըմ։ Սա̈ սըհե չորս պընիկ ա փոխըմ, վըրա̈ հինգեբորթին ասըմ ա. «Ես պըետկ ա հենց ախչիկ առնեմ, վըեր իսանի ծըիծը ծըծած չի ըլի»։ Մի օր էս տըղեն մի տան կըշտով անցկենալիս տըենըմ ա հըրես մի կընգյա̈ ճըվոց ա կյա̈լի, հըրցընըմ ա, ասըմ ա. «Էս ի՞նչ պա̈ն ա»։

Ասըմ են. «Հե՛չ, մի աղքատ հարսն ա ազատվըմ»։

Տա̈ քյնըմ ա ըտի, էնքան ճամփա ա պահըմ, վըեր էտ կընիկը ազատվըմ ա, հըրցընըմ ա. «Ի՞նչ ա պիրել»։ Ասըմ են. «Ախչիկ»։

Կյա̈լիս ա մոր կուշտը ասըմ ա. «Առ էս քյիսա վըեսկին, էտ րեխեն ինձ տուր»։ Էտ կընիկը հըվատըմ չի, համա վըեր էտ մարթը նորից ա ասըմ, տա̈ վըեսկին վըեր ա ունըմ քյիսով, էտ պա̈րուրը հըլե տըհե կըլոլած՝ առանց ծիծ տալ, տալըիս են էտ մարթին։

Էս մարթն էլ շատ ուժով ու քաչ մարթ ա ըլըմ, քյնըմ ա սարեսար ման ա կյա̈լի, մի ճուտամըեր ասլան ա փըռնըմ, պիրըմ տուն, օրեկան կըթըմ են՝ էտ րեխին տալըի ու տա̈ տըհե էտ րեխին ասլանըի կաթնով պահըմ ա, մեծըցնըմ։ Մի էն տեսակ ախչիկ ա տա̈ռնըմ, վըեր էլ ասըիլու չի, վըե՛չ ուտըես, վըե՛չ խըմես՝ տըրա̈ բոյին-բուսին ու սիփաթին մըտիկ անես։ Ախչիկը տա̈ռնըմ ա տասնութ տըրեկան, էտ մարթն էլ տառնըմ ա եոեսունըութ տըրեկան, տըհա̈նք հըրսանիք են անըմ ու փըսակվըմ

նա։ Անց ա կենըմ մի տարի, տըրան մի տըղա յա ըլմ. տըղեն ատոնըմ ա իրեք տըրեկան թե չէ, մի ախչիկ էլ ա ունենըմ։ Սա շատ ա ղու՞ ըլըմ իրան բախտիցը ասըմ ա. «էս ա լա՜վ ա արթեն մի տըղա, մի ախչիկ ունեմ, էս կընիկս էլ լա՜վն ա՝ նամուսով, հարստությունիս էլ հաանիլ չիկա, էս տըղիս կըմեծըցնեմ, կըփսակեմ, ըխչկանըս էլ մարթի կըտամ ու կապրենք մըեզ մըհար»։

Համա դե խեխչ մարթը գյիդըմ չի, թէ հըրա կըլխին ինչ քյա-լա՜ղ դի կյա՜յ։ Սըրա՜ն երկու ծի ունըի, մինը քամու աղաքն ա կըտրըմ՝ քամու ծի ա, մինն էլ կըրակի աղաքն ա կըտրըմ՝ կըրակի ծի ա։ Օրերի մի օր տըենըմ ա էտ կըրակի ծին լըղարել ա, օր օրի լըղարըմ ա, չոփ ա առնըմ, կընդյա՜նը հըրցընըմ ա, ասըմ ա. «էս խի՞ ա էս ծին սըհե լըղարըմ»։ Կընիկը ասըմ ա.—«Գյիդըմ չըմ»։

Մի օր էլ էս մարթը սուտ հիվընդանըմ ա ու մընըմ տանը. կընիկը ասըմ ա. «էս ի՞նչ ա ըլել»։

Ասըմ ա. «Կընիկ ջան, շատ փիս հիվանդ եմ, ջանըմս սաղ տըեղ չիկա»։ Կընիկը կյա՜յիս ա կուշտը. «Վի, մարթ ջա՛ն, էտ ինչ ա ըլել, վերըղերըտ ա ցավըմ, տո՜ւ հիվանդանալ մի, հիլ ա ես քու տըեղը հիվանդանամ»։

Սա՜ սըհե դասարի կեղծավորութըին ա անըմ, մարթի կյլոխը տընըմ իրան ծընդանը մաժըմ-մըժմըժըրըմ, մարթը սուտ քուն ա մըտնըմ։ Կընիկը դյիդըմ ա, թե մարթը ղորթ, վըեր քընած ա, քընի հո՜ւլունքը ցըրիցը հանըմ ա, քըցըմ մարթրի անդաճը, վըեր էլ դա՜րթնի վըեչ, մըչև ինքը կյա՜ էտ հո՜ւլունքը տըրա՜ ընդաճից հանըի։ Մարթրին արհե հիլ ա անըմ, չորերը հաքնըմ, դըրթա՜րվըմ, կըրակի ծիուն նստըմ ու քըշըմ։ Տըրա՜ քյնա՜լուց եդը մարթը ծըեռաց վըեր ա կենըմ, շորերը հաքնըմ, կյլոխը փըրթաթըմ ա իրեսմըիրեռը ծածկըմ ա մըենակ աչկերն ա հիլ անըմ, քամու ծիուն նստըմ ա ու քըշըմ։ Էտ քամու ծին էլ իմաստուն ա ըլըմ, էտ մարթը ծիուն ասըմ ա. «Ծի՛, տո՜ւ էս դյիդըմ, թե վըերըղի դես քյնա՜յ, լեղ արա ինձ հըսցըրու կըրակի ծիուն, տըենանք ղո՞րն են քյա՜ցել, վըերըղի են»։ Տո՜ւ ծիուն նստըմ ա ու քըշըմ քոլերովը, սարերովը։ Էս ծին տըրա՜ն պիըրըմ ա օխտը սարի քըմակին մի հեյվարա ղո՜ւզ կանանչ թալա ունեղ ա ըլըմ, չորս դոլը լիքը դըլդըլա՜ն ըխպըրնի, սո՜ւրո՜ւն-սուրո՜ւն ծառեր, մեչ արեղը մի էն տըեսակ պալատ կա, վըեր վըե՛չ ասես, վըե՛չ խըմես՝ քըշեր-ցերեկ սըրա՜ն մըտիկ անըես։ Ինքը իրան իրան ասըմ ա. «Տըե՛ր աստոծ, իմ կընիկը խի՞ դի կյա՜լ ըստի, դյա՜ հըլե ինչ ա պըըդա՜ցել էս պալատըի տըեղը»։ Էտ

մարթը լ·ոտըերիցը տըենըմ ա, վըեր իրանք շատ հեռացած են իրանց և գրիցը, նրա̈ մըհար, վըեր ինքը ինչքան ման եկած ա ըլել, էտ դ այդի ծաղկընի ու խոտըեր, ծառեր սկի տըեհած չի ըլել։ Կյա̈լիս ա մոտանըմ ա պալատին, ծիուցը վեր ա կյա̈լի, ծին կապըմ ա բ·ւլկոնըի սնիցը, թուրը հանըմ ա, կամաց ակոշկին մոտանըմ ա ու տըենըմ ա հըրես քառասուն դեվ մեծ ստոլ են սարքել՝ ուտըմ, խմըմ են քյեփ են անըմ ու իրան կընիկը միչերնուն։ Նա̈ պաչըմ ա նըրա̈ն ու տալըի, նա̈ պաչըմ ա նըրան ա տալըի ու տըհե ծըեռոփց ծըեռ էտ քառասունն էլ տըրա̈ն համարես են անըմ, մին մընի ս ալըի։ Մըհի̈լ տըհա̈նց մեծը ասըմ ա. «Ախչի՛, ա դանցըղ էտ խի՞ եդացար էսքամ»։

Ասըմ ա. «էն շան տըղեն ըսօր տանն ա, աշխատանքի չի̈ քյա̈ցել. ս·նչախ քընցըրի խափըեցի ու եկա»։

էս մարթը, վըեր մա̈նըմ ա՝ էլ կարըմ չի հա̈մփըեըի, թուրը հանըմ ա ու սըկըսըմ ա տըհա̈նց փըրթիլը։ Սաղին աչուծախ կըտըրըմ ա ղըրմա-ղըրմա ա անըմ, մըենակ ղաստըի կընգյա̈նը չըտենալու ա տընըմ։ Կընիկն էլ տըռա̈ն քըմակին տապ արած ա ըլըմ, գյիդը·մ ա, թե մարթը իրան տըենըմ չի։ Էտ դեվերիցը մինը վըենց ա ըլըմ առաչուցը ընգյնըմ ա էտ կըտորածնըրի մեջը, վըեր մըենակ էրկու վետն ա կըտրած։ Մարթը տըհե աըհա̈նց փըրթըմ ա իրար վըըչա̈ սա̈քյըմ ա ու կյա̈լիս ա տուն, ծին կապըմ ա կ·ոմըմը, կյա̈լիս ա իրան տըեղըմը պըրանվըմ, քընի հուլունքն էլ ջըբիցը հանըմ ա, քըցըմ անգաճը ու ղաստըի քու̈մ ա մըտնըմ։ Մըխելի մընըմ ա, տըենըմ ա հըրես կընիկը եկավ, հուլունքը մարթի ընգաճիցը հանեց ու հացի պատրաստութին տըեսավ։ Մարթը ղաստի կամաց շուռ ա կյա̈լի էն մի կողքի վըրա̈ ու կամաց աչկերը պա̈ց անըմ, մըթա̈մ թե նոր ա վըե կենըմ։

Կընիկը ասըմ ա. «Վըե՞նց ես, մարթ ջա՛ն»։ Ասըմ ա. «Մի քիչ լա̈վ եմ»։ Ասըմ ա. «Դե մի քիչ ճա̈շից, պա̈նից պիրեմ, կե՛»։ Ասըմ ա. «Վա՛յ է, մըթա̈մ իշտահ ունեմ, վըեր ուտըեմ»։ Ասըմ ա. «Դե զոռով կե, մի քիչ նուբ առ, հու զատ չուտըիլով ըլիլ չի̈»։

Մարթը մի քիչ հաց, պա̈ն ա ուտըմ ու ըլետ պըրանվըմ ա քընըմ։ Ըռավըետը վըեր ա կենըմ ասըմ ա. «Ըսօր մի քիչ լա̈վ եմ, պըետկ ա քյնա̈մ ֆըՑրսի»։ Կընիկը պա̈ն չի ասըմ, ասըմ ա. «Տու ես գյիդըմ»։

Ծին նստըմ ա, կյա̈լի ըլետ ըտեղ, մարթ պիրըմ, ֆըեր կըտըրըիլ ա տալըի ու ասըմ ա. «էս ջա̈նդա̈րնին չիմ կըպիրեք կըլըցնիք էտ ֆըերը ու ֆըեյը վըրա̈ կըտաք»։ Տըհա̈նք ֆըերը կըտըրըմ

են ու էս ջանդաքը կըրըմ, լըցնըմ ըռի, տըհանք կըլխի չեն ըլըմ, վրեր էտ վրետը կըտրած դեվը ղաստըրի սուտըմեռնուկ տըված ա, սաղ լըցնըմ են իրար կըլխի ու ֆըեղը վըրա տալըի։

Էտ մարթը տըհանց փողը տալըիս ա, տըհանք քյնըմ են։ Ինքը մըտնըմ ա տըհանց օթախնըրին, տըենըմ ա՝ ինչ ասըես. վրեր կավրեչ ըտի. չիմ մին-մին մըտիկ ա անըմ ու տըռնեըը փակըմ կյալի տուն։ Տա տըհե մի ամըիս քըշեըով կյալիս ա ըտի սաղ օրը մընըմ տըեղերնին ծանոթանըմ ուտըմ, խըմըմ մըչև մութը մըթնըմ ա թը չէ, կյալիս ա տուն։

Մի օր էլ կընդյանը ասըմ ա. «Ա՛ կընիկ, մի տըեղ եմ քըթել, ընդեղի օթը վըըես շատ լավ կյալիս ա. պըետկ ա մըեր տընեըը ծախըեմ ու քյնամ ընդեղի պալատնըրին առնըեմ։ Մի հատ վաճառական կա, քոշըմ ա, իրան պալատը ծախըմ ա, ես հետը խոսցըել եմ, էքուց ըըթեն պըետկ ա տանըեմ փողը տամ»։ Էքուր փողը վրեր ա ունըմ, քյնըմ րուգյունը կյալիս ա տուն ասըմ ա. «Ա՛ կընիկ, տունը առա. էքուց ես մըեր տունը ծախըմ եմ, հետերնուս վեշ չենք վըեր ունըմ, նըհանք իրանց վեշեըը չիմ հիլ արին միշին, տան հետ ծախեցին, առա»։

Տա տունը ծախըմ ա ու կյալիս են էն տունը։ Կընիկը տըենըմ ա թե չէ, մընըմ ա ըրմացած, թե սա ումնից ա առել ախըր չէ՞ վրեր էտ տունը դևվերին էր, մըհել ասըմ ա. «Շալրաթ էն դեվերին ըսպանող մարթը խափըել ա ու սաըել ա՝ իմն ա էս պալատը ու ծախըել ա մարթըիս վըըա»։

Մի օր մարթը ասըմ ա. «Կընի՛կ, էս թըմրի վըըա ճուր չի ածըես»։ Կընիկն էլ ասըմ ա. «Տըեննաս էտ խի՞ ա ասըմ ճուր մի ածըի, հըլա մի ածըիլ դեմ, փորցեմ տըենամ ինչ դի ըլիլ»։ Տա ամըեն օր էտ թըմըին ճուր ա ածըմ։ Մի օր էլ, վըեր մարթը տանը չի ըլըմ, տըենըմ ա էն դըեվերիցը մինը սըղացավ ու եկավ. տա մընըմ ա ըրմացած, վաղ ա տալըի ճրտովը ընգյնըմ, փըթաթվըմ են, իրար պըշպըշորըմ, մըշեվ րուգյուն ուտըմ, խըմըմ, իրար հետ քյեփ են անըմ։ Րուգյունը մարթըի կյալու վախտը էս դեվը տապ ա անըմ։ Սըհանք սըհե մի ամըիս իրար հետ տըղըըմ են, մի օր էլ էս դեվը էտ կընդյանը ասըմ ա. «Թա մընչև եփ ղենք սըհե ապրիլ՝ հարամ-մարամ։ Մի մարթըիցդ մացի, ասա՝ քու ուժը էտ ընչըմն ա, վըեր տու տըհե ուժոք ես»։

Մարթն էլ ղասըտի տեղափոխվըմ ա էտ դըեվերի տունը ըտի ապրըմ ա, վըեր տըենա՝ կընիկը ինչ կասըի, եդով կընդյանը սպանըի։ Մի օր մարթը աշխատանքից ա, թե ֆըեըսից կյալիս ա

տուն. կընիկը քյնըմ ա աղաքը ղաստըի կյեղծավըերութին ա անըմ, մարթըի կուռը ընգյնըմ, ծըեռի պա̈նեըը վըեր ունըմ, պիըըմ ա տուն։ Նըստըմ են հաց են ուտըմ, զըրից են անըմ, ընգըյնըմ ա մարթի ճիտո̈վը՝ պըշպըշորըմ ա ու ասըմ ա. «Ա՛ մարթ, քու ուժը ընշըմն ա, վըեր տու էտքան ուժոք ես»։

Ասըմ ա. «Ա՛ կընիկ, իմ ուժը իմ էս նետ-աղեղի միչին ա. վըեր էտ նետ-աղեղի լա̈րո̈վը իմ էրկու պիթս կապեն իրարից կյ ես կարալ չեմ մի պա̈ն էլա անըեմ»։ Կընիկը ասըմ ա. «Սուտ ես ասըմ, հըվատըմ չեմ, վըե՞նց կըլի տըհե պա̈ն»։ Ասըմ ա. «Հա՛. ա կընիկ, իմ արևը»։ Ասըմ ա. «Դե՛, պի փորցենք տըենանք՝ էտ վըենց ա ըլըմ»։

Մարթն էլ կընգյա̈ սըրտինը գյիդըմ չի, պիրըմ ա նետ աղեղը քանդըմ, լա̈րը տալըի կընգյա̈նը, ասըմ ա. «Ա՛յ, էրկու պիթս վըեր սրա̈նո̈վ կապես՝ արթեն պա̈նս պո̈ւրթ կըլի»։ Կընիկը ղաստի ծըծաղըմ ա ասըմ ա. «Ա՛ մարթ, ես հու ըեխա չեմ, խի՞ ես վըրես ծըծաղըմ»։ Մարթն էլ ասըմ ա. «Ջէ՛, ա՛ կընիկ, դո̈ւզ եմ ասըմ»։

Ասըմ ա. «Դե՛, պի կապըեմ տըենամ»։ Մարթը էրկու պիթը տընըմ ա իրար վըրա̈, կընիկը էտ լա̈րո̈վը մարթըի պիթերը կապըմ ա պընինդ։

Մարթը ասըմ ա. «Ա՛յ արթեն սըհենց ինձ տասը տըըեկան ըեխեն էլ կըսպանըի»։ Ասըմ ա. «Ա՛ մարթ, դե հերիք ա, հերիք. չէ, չէ մի պողեր, էտ հու վըեր քեզ մըհետ թափ տաս, տասը կըտոր կանես»։

Ասըմ ա. «Ջէ՛, ա կընիկ, կարալ չեմ, մըխըըս կըկըտըի. վըեսկուխս դեմ կըլի»։ Ասըմ ա. «Հըլա̈ մի քիչ փորցըի տըենամ»։

Ասըմ ա. «Ա՛ կընիկ, ի՞նչ փորցեմ, ես իմ հո̈մա̈րը հու նոր չըդեմ փորցըիլ»։ Մոտանըմ ա կընգյա̈նը ասըմ ա. «Ետ արա, ե՛տ, հերիք ա ինչքան ղարափաթ արինք»։ Կընիկը ղասըտի փախչըմ ա ու ծըծաղըմ ա, ասըմ ա. «Ետ չը դեմ անըիլ»։

Մարթը մընըմ ա շըվարած, կընիկը տըենըմ ա, վըեր ղորթ մարթը մընացել ա ճիտը ծուռ կաղնած, վազ ա տալըի դեվին իմաց տալըի։

Դեվը կյա̈լիս ա, պիրըմ են էտ մարթին փըթաթըմ կոխըմ կյո̈մշի մեծ կաշվըի մեչ ու քըցըմ տըռա̈ն տակը, ասըմ են՝ հիլա էնքան սոված-ծարավ կենա, վըեր իրան-իրան սատկի։ Էտ օրվանից տըհա̈նք իրար հետ աղատ ապըըմ են։ Էտ խեխչ մարթը էնքան չըըշարվըմ ա կարըմ չի ղատ շինի, էտ լա̈րը տըրա̈ մը-

սերը կըտրըմ ա վըեսկրոին դեմ ըլըմ, տա՛ էլ ցավըիցը քիչ ա մընըմ, թե ուշաթափ ըլի։ Սոված ծարավ տըրա՛ն տակին վըեր ընգըլած ա. Էտ գեվն ու կընիկը քյնըմ կյա՛լիս են տըրա՛ն քացով տալըի։ Մըենակ արդեն ա վըեր քյնըմ ա հոր կըշտին կաղնըմ ա ճիար ծըռած մըտիկ ա անըմ, մըտիկ՝ հոքոց հանըմ, համա գե ինչ օգուտ, վըեր կարըմ չի հորը մի ճար անըի։ Մին-մին մորիցը թաքուն հաց ա կյո՛ղանըմ պիրըմ հորը տալըի։ Մի օր էլ տըհա՛նք մարթ ու կընիկ րաղըմը կանանչ ծառըի տակին սըեղան են սարքել ու իրար հետ ուտըմ, խըմըմ, քյեփ են անըմ, տըղեն մի կըտոր մըիս ա կյո՛ղանըմ, պիրըմ թաքուն հորն ա տալըի։

Հերը ասըմ ա. «Ա՛ բալա ջան, րա շըքել եփ դեմ սըհե տանջըվըլիք»։ Ասըմ ա. «Ի՞նչ անըեմ, հայրիկ ջան»։

Ասըմ ա. «Էս լա՛րին մըենակ իմ թուրը կըկտըրի, ուրո՛ւշ պա՛ն կըտարի չի»։ Բեխեն շըրշարվըմ ա կարըմ չի թուրը կախ արած տըեղիցը վըե պիրի, բոյը հասնըմ չի, հերը փորսուղ կյալիս ա բափ ըրեխեն հոր միշկին կաղնըմ ա, թուրը վեր ա պիրըմ, համա կարըմ չի, վըեր թուրը հանըի, հերը կեռքով կուբորիցն ա փըռնըմ, բեխեն էլ կոթիցն ա ծիք տալըի՝ մի հանգով հանըմ են, արդեն թուրը տափըին ցից կըգնցնըմ ա, կոթըիցը փըռնըմ, հերն էլ էրկու պըթի մեջտեղըմը պահըմ ա ու խիշի-խիշի ա անըմ ու լա՛րը կըտրըմ ա, ըլնա թուրը տըլնըմ են տըեղը՝ պատըիցը կախ են անըմ։ Տըղին ասըմ ա. «Դե՛, ես ըլեա կըմըռնեմ իմ տըեղը, տո՛ւ պա՛ն չասես, մըշե ջանըս տըեղը կյա՛, թե չէ հըմի ես կարալ չեմ տըրա՛ հետ կըռիվ անեմ»։

Տըղեն թաքուն ճոկ ա հորը պա՛ն տալըի՝ ուտըմ ա, հերն էլ ճոկ ա թաքուն պա՛ն ուտըմ նըհա՛նց քընած վախտը, տըհե մի ամըիս տա՛ ըտի մընըմ ա, մի ամըիս եղը, արթեն իրան լա՛վ դըրնգըրցըրած ա ըլըմ։ Մի օր էլ գեվն ու կընիկը լա՛վ ճա՛շ են էփել՝ ուտըմ են, վըրըերնուցն էլ հաղող են ուտըմ ու էտ չեչերը շըպըռտըմ են մարթի իրեսովը, տա՛ էլ հա՛մփերըմ չի, ծըեռաց տո՛ւս ա վազըմ, էտ գեի հետ կոխ են ունըմ, տըհա՛նք սկսըմ են մին-մընի տուփովը տալըի։ Ծփ վըեր գեվն ա ախտըմ, կընիկը գեվի գըլն ա դըահըմ, ասըմ ա. «Սպանըի՛, սպանըի՛ կորշըի, ցըխեմ տըրա՛ կյլոխը, ես քեզ էն վախտը ասեցի՝ սպանըի, կորչի, տո՛ւ խի՞ էտ շանը սաղ հիլ արիր վըեր հըմի էլ քեզ հետ կոխ ա ունըմ»։ Մըհել, վըեր մարթն ա ախտըմ, մարթըի ղըլն ա անց կենըմ ասըմ ա. «Խեխտի՛, խեխտի՛, թող կորչի, ֆըեղեմ տըրա՛ կյըլոխը»։

Մարթը, վըեր մին-մին իրան դաստի բոշ ա անըմ, ըլեա

կընիկը գեվի զոլն ա անց կենըմ, ասըմ ա. «Սպանըի՛. սպանըի՜. ցըխեմ տըրա կյլիխը, տու խի՞ տըրան չըքել մըջի հիլ ես արել. վըեր մըհել քեզ հետ կոխ ա ունըմ, ես քեզ էն վախտը ասըեցի՝ սըպանըի, թող կորչի»։ Վերջը մարթը ըստեղ կընգյանը լավ փորցըմ ա ու համոզվըմ ա կընգյա վըրա, վըեր սա կընիկ չի՛. կլխակեր ա, էտ դեվին հըլորըմ ա, տակը կոխըմ. խեխտըմ ա, քաշ տալըի տեւռը՝ ղըրմա-ղըրմա կըտորըմ ա։ Տըռանը մի պըհիր ա տալըի, կընգյանը ժընջլով կապըմ ա էտ պըհըրիցը. դեվի մըսերը ածըմ ա ազաքը ու ասըմ ա. «Դե՛ կե, շատ ես սիրել տըրան»։

Մի ամըիս սըրան զատ չի տալըի ու էտ ղոլըի վըրա էլ մըտիկ չի անըմ, մի օր էլ մըտիկ ա անըմ, վըեր էտ մըսերը ինչքան դուղեն հասըել ա կըերել ա, ինչքան չէ, մընացել՝ ինքն էլ վեր ա ընգյել մըեռել։ Տա փոս ա կըտըրըմ, քըցըմ մեչը, ֆըեզը վըրա տալըի ու ասըմ ա. «Սո՛ւտ ա, բոզը բոզ կըլի, ինչ ջինս ուզըմ ա ըլի, ուզըմ ա խսանի ծըիծ ծըծի, ուզըմ ա՝ անասունի»։

